

կհանեն: Խնայողութեան համար վեց ամիս Մեծ Պահք կրօնեն եւ լուրհայով ու ձեռով կ'անցունեն իրենց օրերը:

Առաջուան ջերմեռանդութիւնն անյայտ եղած է այս թաղին եւ անոր յաջորդած է անտարբերութիւն աղօթքի մասին: Կիրակի առաւօտ մը գնա Մայր Եկեղեցին. ժողովուրդէն մարդ չպիտի տեսնես հոն. եթէ քահանայ մը տեսնես՝ մոմ մը վառէ եւ դուրս ելիր: Կիները միայն Ս. Զատիկին կամ Ս. Ծնունդին օրերը կ'երթան եկեղեցին, եւ այն ալ ոչ թէ աղօթելու համար, այլ իրարու հագուստներու վրայ դիտողութիւն ընելու, աղջիկներն մանչերու նշանելու եւ երբեմն ալ եկեղեցւոյն մէջ զաւակ բերելու համար:

Իգական սեռը թուղթ բացող կնիկներու ալ կհաւատայ, պակկա նետող խաթուններուն ալ. եթէ կին մը հորի դոյլ կորուսնէ՝ թուղթ բացողներու կողմէ կորուսած դոյլը գտնելու համար – Թասօնիի՞ ղիմելու էր. եթէ աղջիկ մը իւր սիրականը կորուսնէ՝ պակկա նետել կու տայ: Այս նախապաշարումները շատ տուններու մէջ դեռ կ'ոտնոտին:

Իգական սեռը հոս պճնասէր չէ, հագուստի մասին շատ դրամ չմսխէր. տարին անգամ մը Բերա կելնէ եւ Լուի Ֆիլիքի ժամանակէն մնացած գլխարկ մը կ'առնէ քառապատիկ գնով եւ յետ կը դառնայ. ասոր կ'ըսեն, հնաձեւութիւն նորաձեւութեան...: Հագուստ վայելեցնելու համար ալ երկու – երեք ժամ հայելիին առջեւ մնալ չուզէր, հագուստն միմիայն իւր անձը պաշտպանելու համար կը հագնի, եւ ասոր համար է, որ երբեմն գուլպաները սխալմամբ ձեռներուն կ'անցունէ եւ ձեռնոցներն ոտներուն: Ո՛րչափ երիտասարդներ կան, որ ասանկ աղջիկներ կ'փնտռեն: Աշխատասէր են. առաւօտէ մինչեւ երեկոյ կա՛մ կար կկարեն, կամ լաթ կլուան եւ կամ տախտակ կսրբեն. տեսակ մը աղջիկներու կամ կիներու պէս ծունկ ծունկի վրայ դրած պատուհանին առջեւ չեն նստիր շաբաթներով:

Այս թաղին մէջ կրնակի Պ. Մինաս Քաբամաճեան, ազգային երեսփոխան եւ *Լոյս* հանդէսին խմբագիր, որ խմբագրական տաժանելի ասպարէզին մէջ ազգին կծառայէ իւր լուրջ եւ զաւեշտական յօդուածներով եւ սակայն դարձեալ պէտք եղած քաջալերութիւնը չգտներ: Հոս կրնակի նաեւ ազգային երեսփոխան եւ *Հայրենիքի* խմբագիր Պ. Մկրտիչ Մելիքեան, որ խմբագրական ծանր բեռն տակ կձնշուի: Զգիտեմ թէ այն ժողովուրդն, որ *Հայրենիք* մը չէ կարող ապրեցունել, իրաւունք ունի՞ Հայրենիք պօռալու...: Հոս ծնած է Գերապատի Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան. Պատրիարք կ'ուզէ ըլլալ եւ չի կրնար: